

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ
ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴ**

10 հուլիսի, 2026 թ.

N 16 - Լ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2026-2029
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Կանոնադրության 14.17.3 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել Պալատի 2026-2029 թվականների զարգացման հայեցակարգային ուղղությունները և 2026 թվականի առաջնահերթ գործողությունների ծրագիրը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի խորհրդի կողմից հաստատման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2026 թ. հուլիսի 10 -ի N 16 – Լ որոշման

**ՊԱԼԱՏԻ 2026–2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԾՐԱԳԻՐԸ**

	Էջ
Ներածություն	4
I ՊԱԼԱՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	5
1. Որակավորման համակարգի զարգացում	5
2. Շարունակական մասնագիտական զարգացման համակարգի կատարելագործում	5
3. Միջազգային մասնագիտական ստանդարտների ներդրման աջակցություն	6
4. Թվային փոխակերպում և արհեստական բանականության կիրառում	6
5. Անդամների համար ստեղծվող արժեքի և համայնքային կապերի զարգացում .	7
6. Մասնագիտության հանրային հեղինակության և Պալատի տեսանելիության բարձրացում	8
7. Ուսանողների, երիտասարդ մասնագետների և բուհերի հետ աշխատանքի զարգացում	8
8. Շահառուների և գործարար համայնքի հետ համագործակցության զարգացում	9
9. Օրենսդրական և պետական քաղաքականության ձևավորման գործընթացներին մասնակցություն	9
10. Միջազգային համագործակցության ընդլայնում	9
11. Պալատի ինստիտուցիոնալ և կառավարչական կարողությունների ամրապնդում.....	10
12. Ֆինանսական կայունության ապահովում	10
13. Որակի ապահովման և մասնագիտական մեթոդաբանության զարգացում	11
14. Պալատի ռեեստրի վարման կատարելագործում	11
15. Անդամ կազմակերպություններից ստացվող հաշվետվությունների մոնիթորինգի և վերլուծության համակարգի զարգացում	11
16. Աուդիտորական ծառայությունների որակի արտաքին գնահատման համակարգի զարգացում	12
17. Կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթների արդյունավետ իրականացում	12
18. Ռազմավարական պլանավորման շարունակականության և կանոնադրության համապատասխանեցման ապահովում	13
II 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ	14
1. Որակավորման համակարգ	14
2. ՇՄՁ համակարգի բարելավում	15
3. ՇՄՁ գնային քաղաքականության վերանայում	16
4. Միջազգային ստանդարտների հայերեն թարգմանություն	16

5.	Որակի ապահովման և մեթոդաբանական աջակցության զարգացում	16
6.	Անդամների համայնքային և սպորտային միջոցառումներ	16
7.	Բիզնես համայնքի հետ հանդիպումներ	16
8.	Բյուջետային քաղաքականության և ֆինանսական զարգացման մոդելի վերանայում	17
9.	Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության զարգացում	17
10.	CRM կամ այլ ավտոմատացված կառավարման համակարգի ներդրում	17
11.	Եկամուտների, ծախսերի և բյուջեի կատարողականի վերլուծություն	18
12.	Փաստաթղթաշրջանառության և փաստաթղթավորման ժամանակացույց	18
13.	Աշխատակազմի գործառույթների հստակեցում	18
14.	Գրասենյակի արտաքին և ներքին միջավայրի բարելավում	18
15.	Միջազգային համագործակցություն և ՀՄԴ անդամակցություն	18
16.	Ուսանողների և բուհերի հետ աշխատանք	19
17.	Այլ շահառուների հետ համագործակցություն	19
18.	Հանրային տեսանելիություն և հաղորդակցություն	19
19.	Օրենսդրական նախաձեռնություններ	19
20.	Անդամների բավարարվածության և հետադարձ կապի համակարգ	20
21.	Պալատի ռեեստրի վարման կատարելագործում	20
22.	Անդամ կազմակերպություններից ստացվող հաշվետվությունների մոնիթորինգի և վերլուծության համակարգի ներդրում	20
23.	Աուդիտորական ծառայությունների որակի արտաքին գնահատման համակարգի կատարելագործում	20
24.	Զարգացման պլանավորման և ռազմավարության հաստատման իրավասությունների կանոնադրական հստակեցում	21
III ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ		22
IV ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ		23

Ներածություն

Պալատի զարգացման հաջորդ փուլը պետք է ուղղված լինի ոչ միայն ընթացիկ գործունեության արդյունավետ կազմակերպմանը, այլև Հայաստանի հաշվապահական և աուդիտորական մասնագիտության զարգացման գործում Պալատի դերակատարության էական ուժեղացմանը:

Առաջիկա երեք տարիների ընթացքում Պալատի գործունեության հիմնական նպատակներն են՝

- մասնագիտական կրթության և որակավորման համակարգի զարգացումը,
- շարունակական մասնագիտական զարգացման համակարգի կատարելագործումը,
- մասնագիտական միջազգային ստանդարտների ժամանակին և որակյալ ներդրման խթանումը,
- թվային տեխնոլոգիաների և արհեստական բանականության կիրառման ընդլայնումը, այդ թվում՝ Պալատի կրթական, քննական և վարչարարական գործընթացներում,
- աուդիտորական գործունեության թվային գործիքների և ավտոմատացված լուծումների կիրառման խթանումը,
- աուդիտորական ծառայությունների որակի արտաքին գնահատման համակարգի կատարելագործումը,
- միջազգային համագործակցության խորացումը,
- շահառուների հետ փոխգործակցության զարգացումը,
- մասնագիտության հանրային հեղինակության բարձրացումը,
- Պալատի կառավարման, ֆինանսական կայունության և ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդումը:

Սույն փաստաթղթով նախանշվում են Պալատի 2026–2029 թվականների զարգացման հիմնական հայեցակարգային ուղղությունները և սահմանվում են Խորհրդի լիազորությունների շրջանակում դրանց իրականացմանը նպաստող՝ 2026 թվականի առաջնահերթ գործողությունները:

Փաստաթուղթը հանդիսանում է Պալատի զարգացման և Խորհրդի կողմից նախատեսվող նախաձեռնությունների իրականացման հայեցակարգային ու գործնական ուղենիշ՝ նպաստելով Պալատի զարգացման առաջնահերթությունների համակարգված և հետևողական իրականացմանը:

Սույն փաստաթուղթը մշակվել է՝ հաշվի առնելով Պալատի կանոնադրությունը, Ընդհանուր ժողովի որոշումները, Պալատի 2026 թվականի գործունեության տարեկան ծրագիրը, ինչպես նաև Պալատին օրենքով և կանոնադրությամբ վերապահված գործառույթները:

Հայեցակարգային զարգացման ուղղությունները ներառում են ինչպես Պալատի զարգացման նոր նախաձեռնությունները, այնպես էլ օրենքով և կանոնադրությամբ Պալատին վերապահված գործառույթների արդյունավետության բարձրացմանը, թվայնացմանը և շարունակական կատարելագործմանն ուղղված առաջնահերթությունները:

I. ՊԱԼԱՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Որակավորման համակարգի զարգացում

Պալատի գործունեության առանցքային ուղղություններից է ժամանակակից, մրցունակ և միջազգային պահանջներին համապատասխանող մասնագիտական որակավորման համակարգի ապահովումը:

2027 թվականի հունվարի 1-ից ավարտվում է ACCA-ի կողմից Պալատի որակավորման ծրագրի առանձին քննություններից տրամադրվող ազատումների գործող ժամկետը: Միաժամանակ, Հայաստանի մասնագիտական շուկայում ձևավորված իրավիճակը, գործող իրավական կարգավորումները և մասնագիտության զարգացման հեռանկարները պահանջում են սահմանել Պալատի որակավորման համակարգի հետագա զարգացման ռազմավարական ուղղությունը:

Քննարկման ենթակա հիմնական տարբերակներն են՝

1. շարունակել համագործակցությունը ACCA-ի հետ՝ երկարաձգելով քննություններից ազատումների տրամադրման ժամկետը,
2. զարգացնել համագործակցությունն արտասահմանյան այլ ճանաչված մասնագիտական որակավորման կառույցների հետ՝ ապահովելով որակավորման համակարգերի մրցակցային միջավայր,
3. շարունակել կիրառել ACCA-ի ուսումնական նյութերը՝ դրանք աստիճանաբար վերանայելով, Հայաստանի մասնագիտական և իրավական միջավայրին համապատասխանեցնելով և նոր գիտակարգեր ավելացնելով՝ ազգային որակավորման ամբողջական համակարգ ձևավորելու նպատակով:

Ընտրվող ռազմավարական ուղղությունից անկախ՝ պետք է ապահովվի որակավորման գործընթացների շարունակական կատարելագործումը, թափանցիկությունը, միասնական չափանիշների կիրառումը և մասնագիտական հանրության վստահությունը:

2. Շարունակական մասնագիտական զարգացման համակարգի կատարելագործում

Պալատի ռազմավարական առաջնահերթություններից է անդամների և մասնագիտական հանրության գիտելիքների շարունակական արդիականացումը:

ՇՄԶ ծրագրերը պետք է կազմակերպվեն ոչ միայն Երևանում, այլև հանրապետության տարբեր մարզերում՝ ապահովելով մասնագիտական համայնքի առավել լայն ընդգրկվածություն:

Դասընթացների թեմատիկ շրջանակը պետք է համապատասխանեցվի մասնագիտության արդի և ապագա մարտահրավերներին՝ ներառելով, մասնավորապես՝

- արհեստական բանականության կիրառումը հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտներում,
- տվյալների վերլուծությունը և թվային գործիքների կիրառումը,
- կիրառական տնտեսագիտությունը և տեղեկատվական անվտանգությունը,
- կայունության և ESG հաշվետվողականությունը,
- փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման պահանջները,

- ֆինանսական տեխնոլոգիաները,
- թվային ակտիվների և կրիպտոակտիվների հաշվապահական, աուդիտորական և հարկային խնդիրները,
- մասնագիտական էթիկան, անկախությունը և որակի կառավարումը:

Պետք է պարբերաբար գնահատվեն Պալատի անդամների մասնագիտական զարգացման կարիքները, դասընթացներին մասնակցության խոչընդոտները և անդամների ակնկալիքները:

Գնահատման արդյունքների հիման վրա շարունակական մասնագիտական զարգացման ծրագիրը պետք է պլանավորվի և շարունակաբար կատարելագործվի՝ հաշվի առնելով Պալատի զարգացման հայեցակարգային ուղղությունները և մասնագիտության զարգացման միտումները:

3. Միջազգային մասնագիտական ստանդարտների ներդրման աջակցություն

Պալատի կարևոր առաքելություններից է Հայաստանի Հանրապետությունում միջազգային մասնագիտական ստանդարտների ժամանակին ներդրմանը և դրանց միասնական ու որակյալ կիրառմանը նպաստելը:

Այդ նպատակով պետք է շարունակական հիմունքներով իրականացվեն՝

- Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների,
- Աուդիտի միջազգային ստանդարտների,
- Որակի կառավարման միջազգային ստանդարտների,
- Հաշվապահների միջազգային դաշնության (ՀՄԴ) Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի

պաշտոնական հայերեն թարգմանության, մասնագիտական խմբագրման, հաստատման, հրապարակման և հետագա թարմացման աշխատանքները:

Պետք է ձևավորվի միջազգային մասնագիտական ստանդարտների փոփոխությունների մշտադիտարկման, հայերեն տարբերակների ժամանակին թարմացման և մասնագիտական հանրության համակարգված իրազեկման կայուն համակարգ: Այդ նպատակով Պալատը պետք է ձևավորի համապատասխան ինստիտուցիոնալ և մասնագիտական կարողություններ:

Պալատը պետք է ապահովի անդամների կողմից բարձրացվող՝ միջազգային մասնագիտական ստանդարտների կիրառմանն առնչվող գործնական հարցերի և խնդիրների համակարգված ուսումնասիրությունը, ինչպես նաև՝ դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների, ուղեցույցների, գործնական օրինակների և այլ մասնագիտական նյութերի մշակումը և հրապարակումը՝ նպաստելով ստանդարտների միասնական և որակյալ կիրառմանը Հայաստանի Հանրապետությունում:

4. Թվային փոխակերպում և արհեստական բանականության կիրառում

Պալատի կառավարման և ծառայությունների մատուցման գործընթացները պետք է աստիճանաբար թվայնացվեն և ավտոմատացվեն:

Թվային փոխակերպումը պետք է ընդգրկի՝

- անդամակցության գործընթացը,

- որակավորման ծրագրերի կառավարումը,
- քննությունների կազմակերպումը,
- ՇՄՁ ժամերի հաշվառումը,
- փաստաթղթաշրջանառությունը,
- անդամների և այլ շահառուների հետ հաղորդակցությունը,
- ֆինանսական և կառավարչական հաշվետվությունների ձևավորումը:

Պետք է ուսումնասիրվեն նաև արհեստական բանականության կիրառման հնարավորությունները Պալատի ներքին կառավարման, կրթական ծրագրերի և քննական գործընթացների, մասնագիտական նյութերի մշակման և անդամներին տրամադրվող ծառայությունների շրջանակում:

Միաժամանակ Պալատը պետք է աջակցի իր անդամներին հաշվապահական և աուդիտորական գործունեությունում արհեստական բանականության ճիշտ, պատասխանատու և արդյունավետ կիրառման հարցերում՝ կազմակերպելով համապատասխան դասընթացներ, մասնագիտական քննարկումներ և, անհրաժեշտության դեպքում, մշակելով մեթոդական առաջարկություններ:

Աուդիտորական գործունեության թվայնացում

Պալատը պետք է նպաստի աուդիտորական գործունեության թվայնացմանը և ժամանակակից աուդիտորական գործիքների կիրառմանը՝ ուսումնասիրելով աուդիտի ավտոմատացված լուծումների ներդրման հնարավորությունները և դրանց կիրառման լավագույն միջազգային փորձը:

Որակավորման քննությունների համակարգի թվայնացում և արդիականացում

Պալատը պետք է փուլային կերպով զարգացնի որակավորման քննությունների թվային կազմակերպման համակարգը՝ ներառելով քննական նյութերի միասնական թվային կառավարումը, համակարգչային քննությունների անցկացման հնարավորությունները, գնահատման գործընթացների ավտոմատացման տարրերը և, անհրաժեշտության դեպքում, արհեստական բանականության գործիքների կիրառումը՝ պահպանելով Պալատի մասնագիտական վերահսկողությունն ու վերջնական որոշման իրավունքը:

5. Անդամների համար ստեղծվող արժեքի և համայնքային կապերի զարգացում

Պալատի զարգացումը պետք է հիմնված լինի անդամների մասնագիտական, կրթական և համայնքային կարիքների շարունակական գնահատման վրա:

Պետք է ընդլայնվեն անդամներին մատուցվող ծառայությունները, բարելավվի ՇՄՁ և այլ ծրագրերի գնային քաղաքականությունը, ձևավորվեն հետադարձ կապի գործուն մեխանիզմներ:

Անդամների միջև մասնագիտական և ոչ ֆորմալ կապերի ամրապնդման նպատակով պետք է կազմակերպվեն՝

- մասնագիտական քննարկումներ,
- կլոր սեղաններ,
- մարզային հանդիպումներ,
- սպորտային և համայնքային միջոցառումներ,

- անդամների և նրանց կազմակերպությունների հաջողությունների ներկայացման միջոցառումներ:

6. Մասնագիտության հանրային հեղինակության և Պալատի տեսանելիության բարձրացում

Հաշվապահի և աուդիտորի մասնագիտության հանրային ընկալման բարելավումը Պալատի ռազմավարական կարևոր խնդիրներից է:

Պետք է ակտիվացվի Պալատի հանրային հաղորդակցությունը՝ չսահմանափակվելով միայն Պալատի անդամներով:

Հաղորդակցության թիրախային խմբերում պետք է ներառվեն՝

- ուսանողները,
- երիտասարդ մասնագետները,
- գործարար համայնքը,
- պետական մարմինները,
- ֆինանսական կազմակերպությունները,
- մասնագիտական բուհերը,
- զանգվածային լրատվության միջոցները,
- հանրության այլ շահագրգիռ խմբերը:

Պետք է կանոնավոր կերպով լուսաբանվեն Պալատի և նրա անդամների մասնագիտական ձեռքբերումները, ոլորտի կարևոր փոփոխությունները, միջազգային զարգացումները և մասնագիտական հանրությանը հետաքրքրող այլ հարցեր:

Պալատը պետք է նաև զարգացնի ոլորտի հետազոտական և վերլուծական գործունեությունը՝ հրապարակելով ուսումնասիրություններ, հարցումների արդյունքներ, մասնագիտական վիճակագրություն և ոլորտի զարգացման միտումների վերաբերյալ վերլուծություններ:

7. Ուսանողների, երիտասարդ մասնագետների և բուհերի հետ աշխատանքի զարգացում

Մասնագիտության երկարաժամկետ զարգացումը պահանջում է երիտասարդների ներգրավման համակարգված քաղաքականություն:

Պալատը պետք է զարգացնի համագործակցությունը մասնագիտական բուհերի, ուսանողների, շրջանավարտների և որակավորման ծրագրերի մասնակիցների հետ:

Պետք է իրականացվեն՝

- մասնագիտական կողմնորոշման միջոցառումներ,
- Պալատի որակավորման ծրագրերի ներկայացումներ,
- ուսանողական հանդիպումներ և բաց դասախոսություններ,
- բուհերի ավարտական միջոցառումներին մասնակցություն,
- լավագույն ուսանողներին Պալատի մրցանակների և կրթական հնարավորությունների տրամադրում,

- երիտասարդ մասնագետների համայնքի ձևավորում:

8. Շահառուների և գործարար համայնքի հետ համագործակցության զարգացում

Պալատի գործունեությունը պետք է հիմնված լինի հաշվապահական և աուդիտորական մասնագիտության բոլոր հիմնական շահառուների հետ շարունակական երկխոսության վրա:

Պետք է ակտիվացվի համագործակցությունը՝

- պետական մարմինների,
- գործարար համայնքի,
- բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների,
- ապահովագրական և ներդրումային կազմակերպությունների,
- կառուցապատողների և այլ ոլորտային միությունների,
- առևտրի և արդյունաբերության պալատների,
- խոշոր գործատուների,
- միջազգային և դոնոր կազմակերպությունների հետ:

Համագործակցությունը պետք է ներառի համատեղ հանդիպումներ, մասնագիտական քննարկումներ, հետազոտություններ, իրազեկման միջոցառումներ և ոլորտային նախաձեռնություններ:

9. Օրենսդրական և պետական քաղաքականության ձևավորման գործընթացներին մասնակցություն

Պալատի առաքելության կարևոր ուղղություններից է հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտների օրենսդրության կատարելագործմանը մասնագիտական մասնակցության ապահովումը:

Պալատը պետք է՝

- մշտադիտարկի ոլորտին վերաբերող օրենսդրական նախաձեռնությունները,
- մշակի և ներկայացնի մասնագիտական առաջարկություններ,
- մասնակցի իրավական ակտերի նախագծերի քննարկումներին,
- նախաձեռնի մասնագիտական համայնքի համար կարևոր օրենսդրական փոփոխություններ,
- ապահովի Պալատի անդամների և մասնագիտության շահերի պատշաճ ներկայացվածությունը պետական քաղաքականության ձևավորման գործընթացներում:

10. Միջազգային համագործակցության ընդլայնում

Պալատի միջազգային համագործակցությունը պետք է ուղղված լինի Հայաստանի մասնագիտական համայնքի միջազգային ինտեգրմանը, Պալատի հեղինակության բարձրացմանը և միջազգային լավագույն փորձի ներդրմանը:

Պետք է ապահովվի Պալատի ակտիվ մասնակցությունը՝

- միջազգային մասնագիտական կազմակերպությունների աշխատանքներին,
- տարածաշրջանային և միջազգային ֆորումներին,
- մասնագիտական կոնգրեսներին,
- միջազգային քննարկումներին և աշխատանքային խմբերին:

Հատուկ ուշադրություն պետք է դարձվի Հաշվապահների միջազգային դաշնության հետ համագործակցության խորացմանը և լիիրավ անդամակցության ուղղությամբ աշխատանքների շարունակմանը:

11. Պալատի ինստիտուցիոնալ և կառավարչական կարողությունների ամրապնդում

Պալատի ռազմավարական նպատակների իրականացումը պահանջում է կառավարման արդյունավետ և հաշվետու համակարգ:

Պետք է կատարելագործվեն՝

- կազմակերպական կառուցվածքը,
- աշխատակազմի գործառույթների և պատասխանատվությունների բաշխումը,
- կատարողականի վրա հիմնված պարզևատրման մեխանիզմները,
- ներքին փաստաթղթաշրջանառությունը,
- որոշումների կատարման մշտադիտարկումը,
- ֆինանսական հաշվետվողականությունը,
- կառավարչական հաշվետվությունների համակարգը,
- խորհրդի, հանձնաժողովների և գործադիր մարմնի միջև փոխգործակցությունը:

12. Ֆինանսական կայունության ապահովում

Պալատի երկարաժամկետ զարգացման համար անհրաժեշտ է ձևավորել ֆինանսական կայունության արդյունավետ մոդել:

Պետք է պարբերաբար վերլուծվեն՝

- եկամուտների աղբյուրները,
- ծախսերի կառուցվածքը,
- ծրագրերի ֆինանսական արդյունավետությունը,
- անդամներին տրամադրվող ծառայությունների ինքնարժեքը,
- օրենսդրական փոփոխությունների հնարավոր ֆինանսական ազդեցությունը,
- եկամուտների նոր աղբյուրների ձևավորման հնարավորությունները:

Պալատի բյուջետային քաղաքականությունը պետք է համապատասխանի ռազմավարական նպատակներին և ապահովի առկա միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործումը:

13. Որակի ապահովման և մասնագիտական մեթոդաբանության զարգացում

Պալատը պետք է նպաստի աուդիտորական գործունեության որակի շարունակական բարձրացմանը՝ մեթոդաբանական աջակցության, լավագույն փորձի տարածման և մասնագիտական խորհրդատվության միջոցով:

Այդ նպատակով անհրաժեշտ է պարբերաբար վերլուծել որակի ապահովման գործընթացների արդյունքները, բացահայտել համակարգային խնդիրները, մշակել դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ և աջակցել անդամներին Աուդիտի միջազգային ստանդարտների և Որակի կառավարման միջազգային ստանդարտների (ISQM) արդյունավետ կիրառման գործում:

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի փոքր և միջին աուդիտորական կազմակերպությունների մասնագիտական կարողությունների զարգացմանը և որակի կառավարման համակարգերի կատարելագործմանը:

14. Պալատի ռեեստրի վարման կատարելագործում

Պալատը «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի, Պալատի կանոնադրության և Պալատի ռեեստրի վարման կարգի համաձայն վարում է իր անդամ աուդիտորական կազմակերպությունների, աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրը՝ ապահովելով ռեեստրում ընդգրկված տեղեկատվության արժանահավատությունը, ամբողջականությունը, ժամանակին թարմացումը և հանրության համար դրա հասանելիությունը Պալատի պաշտոնական կայքում:

Այս ուղղությամբ պետք է շարունակաբար մշտադիտարկվեն և կատարելագործվեն՝

- ռեեստրի վարման և վարչարարության գործընթացները,
- ռեեստրի տվյալների ամբողջականության, անվտանգության և պաշտպանվածության ապահովման մեխանիզմները,
- ռեեստրի թվայնացումը և տեղեկատվական համակարգերի հետ փոխգործակցության հնարավորությունները,
- ռեեստրի արդյունավետ, թափանցիկ և ժամանակակից կառավարման համակարգը:

15. Անդամ կազմակերպություններից ստացվող հաշվետվությունների մոնիթորինգի և վերլուծության համակարգի զարգացում

Պալատը սահմանում և ապահովում է իր անդամ աուդիտորական կազմակերպությունների եռամսյակային և տարեկան հաշվետվությունների, աուդիտորների և փորձագետ հաշվապահների կողմից շարունակական մասնագիտական զարգացմանը վերաբերող հաշվետվությունների ընդունումը, դրանց ամբողջականության ստուգումը, մշտադիտարկումը և վերլուծությունը:

Այս ուղղությամբ պետք է ապահովվեն՝

- անդամ կազմակերպություններից ստացվող հաշվետվությունների հավաքագրման, մշակման և վերլուծության համակարգի շարունակական կատարելագործումը,
- հաշվետվությունների ներկայացման և մշակման գործընթացների հետագա թվայնացումը,

- հաշվետվությունների հիման վրա մասնագիտության զարգացման միտումների, ռիսկերի և համակարգային խնդիրների բացահայտումն ու պարբերական վերլուծությունը,
- հաշվետվությունների արդյունքների կիրառումը Պալատի քաղաքականության, ծրագրերի և զարգացման առաջնահերթությունների ձևավորման գործընթացում:

16. Աուդիտորական ծառայությունների որակի արտաքին գնահատման համակարգի զարգացում

Պալատն իրականացնում է իր անդամ աուդիտորական կազմակերպությունների նկատմամբ օրենքով և իրավական ակտերով սահմանված պահանջների պահպանման արտաքին գնահատում:

Այս ուղղությամբ պետք է ապահովվեն՝

- արտաքին գնահատման ընթացակարգերի և մեթոդաբանության կատարելագործումը,
- արտաքին գնահատումներ իրականացնող մասնագետների կարողությունների զարգացումը և վերապատրաստումը,
- արտաքին գնահատումների արդյունքների ընդհանրացումն ու վերլուծությունը՝ համակարգային թերությունների բացահայտման և դրանց վերացմանն ուղղված գործողությունների իրականացումը,
- արտաքին գնահատման արդյունքների հիման վրա կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառումը:

Պետք է շարունակաբար կատարելագործվեն աուդիտորական ծառայությունների որակի արտաքին գնահատման մոտեցումները՝ կիրառելով ռիսկահենք, թեմատիկ և այլ ժամանակակից մեթոդներ՝ հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը և օրենսդրական կարգավորումները:

17. Կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթների արդյունավետ իրականացում

Պալատը շարունակելու է ապահովել կանոնադրությամբ իրեն վերապահված մյուս գործառույթների արդյունավետ և պատշաճ իրականացումը, մասնավորապես՝

- անդամների՝ մասնագիտական գործունեության հետ կապված օրինական շահերի պաշտպանության ապահովումը,
- համագումարների, կոնֆերանսների, սեմինարների, որակավորման և անդամակցության շնորհանդեսների և այլ միջոցառումների կազմակերպումը,
- հաշվապահական հաշվառումը և աուդիտորական գործունեությունը կարգավորող իրավական ակտերի կիրառման վերաբերյալ մեթոդական օժանդակության տրամադրումը,
- մասնագիտական պարբերականների էլեկտրոնային հրապարակումը,
- անդամների մասնագիտական զբաղվածության, կարիերայի զարգացման և աշխատանքի տեղավորման աջակցության մեխանիզմների զարգացումը:

18. Ռազմավարական պլանավորման շարունակականության և կանոնադրության համապատասխանեցման ապահովում

Ռազմավարական պլանավորումը Պալատի կառավարման մշտական և շարունակական գործիք է: Պալատի զարգացման պլանավորումը պետք է կրի շարունակական բնույթ և հիմնված լինի Ընդհանուր ժողովի որոշումների, Պալատի կանոնադրության, նախորդ ժամանակաշրջանի արդյունքների և մասնագիտական միջավայրի զարգացումների վրա:

Յուրաքանչյուր նորընտիր Խորհուրդ իր լիազորությունների ժամկետի սկզբում ողջամիտ ժամկետում մշակում և հաստատում է իր լիազորությունների ժամանակաշրջանի զարգացման հայեցակարգային ուղղությունները և առաջնահերթ գործողությունների ծրագիրը՝ Ընդհանուր ժողովի կողմից հաստատված ռազմավարության առկայության դեպքում՝ դրա շրջանակում:

Այս ուղղությամբ պետք է ապահովվեն՝

- նախորդ ժամանակաշրջանի զարգացման ուղղությունների և գործողությունների ծրագրի կատարման արդյունքների ամփոփումը և դրանց հաշվառումը հաջորդ ժամանակաշրջանի զարգացման ուղղությունների մշակման ընթացքում,
- Ընդհանուր ժողովի որոշումների և Պալատի ռազմավարության առկայության դեպքում՝ դրա դրույթների հաշվառումը,
- Պալատի զարգացման պլանավորման գործընթացի շարունակականության և մարմինների իրավասությունների հստակ տարանջատման ամրագրումը Պալատի կանոնադրությամբ,
- զարգացման ուղղությունների և գործողությունների ծրագրի պարբերական վերանայումն ու արդիականացումը՝ հաշվի առնելով օրենսդրական փոփոխությունները, մասնագիտական միջավայրի զարգացումները և Պալատի գործունեության արդյունքները,
- անհրաժեշտության դեպքում՝ Պալատի ռազմավարության, կանոնադրության կամ ներքին իրավական ակտերի փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների մշակումը և սահմանված կարգով ներկայացումը համապատասխան մարմինների քննարկմանը:

II. 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

1. Որակավորման համակարգ

1.1. Որակավորման համակարգի հետագա զարգացման մոդելի ընտրություն

Որակավորման հանձնաժողովում քննարկել ACCA-ի հետ համագործակցության շարունակման, այլ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության զարգացման կամ ազգային որակավորման համակարգի ձևավորման տարբերակները:

Քննարկման արդյունքներով առաջարկությունը ներկայացնել Պալատի խորհրդին, այնուհետև՝ ՀՎԽ-ին:

Իրականացման ժամկետ՝ մինչև 2026 թվականի հուլիսի 31-ը:

1.2. Քննական նյութերի արխիվացման կարգ

Մշակել քննական աշխատանքների, քննությունների արդյունքների, տեսաձայնագրությունների և դրանց առնչվող այլ փաստաթղթերի պահպանման և արխիվացման կարգ:

Իրականացման ժամկետ՝ մինչև 2026 թվականի հուլիսի 30-ը:

1.3. Քննությունների կազմման և գնահատման մեթոդաբանություն

Վերանայել քննաթերթերի կազմման և գնահատման գործող մեթոդաբանությունը, սահմանել միասնական գնահատման չափանիշներ և ապահովել տարբեր քննաշրջաններում դրանց հետևողական կիրառումը:

Իրականացման ժամկետ՝ մինչև 2026 թվականի սեպտեմբերի 30-ը:

1.4. Քննությունների բողոքարկման ընթացակարգ

Վերանայել քննությունների արդյունքների բողոքարկման ընթացակարգերը՝ ապահովելով դրանց հստակությունը, թափանցիկությունը և անկողմնակալությունը:

Իրականացման ժամկետ՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:

1.5. Քննական առաջադրանքների շտեմարաններ

Ուսումնասիրել որակավորման ծրագրի առարկաների համար քննական առաջադրանքների և թեստերի շտեմարանների ստեղծման նպատակահարմարությունը և ներկայացնել առաջարկություն:

Իրականացման ժամկետ՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:

1.6. Քննաշրջանների թվի ավելացում

Գնահատել քննաշրջանների թվի ավելացման անհրաժեշտությունը և կազմակերպական հնարավորությունները:

Որոշման կիրառման հնարավոր ժամկետ՝ 2027 թվականի հունվարի 1-ից:

1.7. Շարունակական մշտադիտարկում

Ապահովել որակավորման գործընթացների շարունակական մշտադիտարկում և տարեկան գնահատում:

Իրականացման բնույթը՝ շարունակական:

1.8. Որակավորման քննությունների թվայնացման ծրագրի մշակում

Ուսումնասիրել որակավորման քննությունների թվայնացման միջազգային փորձը և մշակել փուլային ներդրման հայեցակարգ՝ ներառելով տեխնիկական, կազմակերպական, ֆինանսական և իրավական պահանջների գնահատումը, ինչպես նաև՝ փորձնական քննության անցկացման հնարավորությունը:

Իրականացման ժամկետ՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:

2. ՇՄՁ համակարգի բարելավում

2.1. Արտագնա դասընթացներ

Շարունակել Պալատի ՇՄՁ արտագնա դասընթացների կազմակերպման նախաձեռնությունը՝ տարեկան առնվազն երեքից չորս միջոցառում անցկացնելով հանրապետության տարբեր մարզերում:

Առաջին արտագնա դասընթացը նախատեսվում է անցկացնել 2026 թվականի սեպտեմբերի 11–13-ը՝ Ադվերանում:

Դասընթացի շրջանակում նախատեսվում է իրականացնել 10–12 ժամ տևողությամբ ՇՄՁ ծրագիր, ինչպես նաև կազմակերպել կլոր սեղաններ և պանելային քննարկումներ՝ ՀՎԽ-ի, ՀՀ ՊԵԿ-ի, Պալատի խորհրդի, պետական այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

2.2. ՇՄՁ կարգի վերանայում

Վերանայել ՇՄՁ կարգը՝ այլ կազմակերպությունների կողմից իրականացված մասնագիտական դասընթացների և սեմինարների ճանաչումը չսահմանափակելով անհարկի ժամաքանակով և սահմանելով ճանաչման հստակ չափանիշներ:

2.3. Թեմատիկ շրջանակի ընդլայնում

2026 թվականի ՇՄՁ ծրագրերում ներառել արհեստական բանականության, տվյալների վերլուծության, կիրառական տեխնոլոգիաների, ESG հաշվետվողականության, ՓԼ/ԱՖ կանխարգելման, FinTech-ի և թվային ակտիվների վերաբերյալ թեմաներ:

2.4. Անդամների կարիքների գնահատում

Իրականացնել Պալատի անդամների մասնագիտական զարգացման կարիքների ուսումնասիրություն, բացահայտել դասընթացներին չմասնակցելու հիմնական պատճառները և մշակել ներգրավվածության բարձրացման միջոցառումներ:

Իրականացման ժամկետ՝ մինչև 2026 թվականի հուլիսի 31-ը:

3. ՇՄՁ գնային քաղաքականության վերանայում

Վերանայել ՇՄՁ դասընթացների գնային քաղաքականությունը և սահմանել առավել մատչելի պայմաններ այն անձանց համար, որոնք Պալատի անդամ չեն, սակայն նախկինում մասնակցել են Պալատի որակավորման դասընթացներին:

Գնային քաղաքականությունը պետք է նպաստի որակավորման ծրագրերի մասնակիցների հետ երկարաժամկետ կապի պահպանմանը և Պալատի մասնագիտական համայնքի ընդլայնմանը:

Իրականացման ժամկետ՝ մինչև 2026 թվականի հունիսի 30-ը:

4. Միջազգային ստանդարտների հայերեն թարգմանություն

Սահմանել 2026–2027 թվականներին ՖՀՄՍ-ների, ԱՄՍ-ների, ՈԿՄՍ-ների և ՀՄԴ-ի վարքագրի թարգմանության, մասնագիտական խմբագրման, հաստատման և հրապարակման աշխատանքների հերթականությունը:

Ներկայացնել փուլային աշխատանքային ծրագիր՝ պատասխանատուների, ժամկետների և ֆինանսավորման աղբյուրների նշմամբ:

Իրականացման ժամկետ՝ 2026–2027 թվականներ՝ փուլային իրականացմամբ:

5. Որակի ապահովման և մեթոդաբանական աջակցության զարգացում

Վերլուծել որակի ապահովման գործընթացների արդյունքները, մշակել առավել հաճախ հանդիպող թերությունների վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և գործնական ուղեցույցներ, ինչպես նաև կազմակերպել համապատասխան մասնագիտական քննարկումներ և սեմինարներ:

Իրականացման ժամկետ՝ շարունակական:

6. Անդամների համայնքային և սպորտային միջոցառումներ

Ձևավորել Պալատի անդամների սպորտային խմբեր և կազմակերպել ընկերական մրցաշարեր ու այլ համայնքային միջոցառումներ:

Միջոցառումները պետք է նպաստեն անդամների միջև նոր կապերի ձևավորմանը, թիմային ոգու և առողջ մրցակցության զարգացմանը:

Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել «Հիլզ» սպորտային համալիրի հետ:

Մեկնարկի ժամկետ՝ մինչև 2026 թվականի հուլիսի 15-ը, այնուհետև՝ շարունակական:

7. Բիզնես համայնքի հետ հանդիպումներ

Կազմակերպել հանդիպումներ տնտեսության տարբեր ոլորտների գործարարների, ֆինանսական կազմակերպությունների և գործատուների հետ՝ հաշվապահական և աուդիտորական մասնագիտության խնդիրները, բիզնեսի ակնկալիքները և հնարավոր համատեղ նախաձեռնությունները քննարկելու նպատակով:

Անհրաժեշտության դեպքում հանդիպումներին ապահովել ՀՎԽ-ի և պետական այլ մարմինների ներկայացուցիչների մասնակցությունը:

Մեկնարկի ժամկետ՝ մինչև 2026 թվականի հուլիսի 15-ը, այնուհետև՝ շարունակական:

8. Բյուջետային քաղաքականության և ֆինանսական զարգացման մոդելի վերանայում

Վերանայել Պալատի բյուջետային քաղաքականությունը՝ հաշվի առնելով 2027 թվականից սկսնակվող օրենսդրական փոփոխությունները և դրանց հնարավոր ազդեցությունը Պալատի եկամուտների, ծախսերի և գործառույթների վրա:

Գործադիր մարմինը պետք է ներկայացնի Պալատի զարգացման տարբեր սցենարների համար կիրառելի ֆինանսական մոդելներ, այդ թվում՝ առաջարկություններ՝

- եկամուտների աղբյուրների ընդլայնման,
- ծախսերի օպտիմալացման,
- հաստիքացուցակի,
- աշխատավարձերի և պաշտոնային դրույքների,
- ծրագրերի ֆինանսավորման վերաբերյալ:

Իրականացման ժամկետ՝ մինչև 2026 թվականի սեպտեմբերի 30-ը:

9. Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության զարգացում

Մշակել և փուլային եղանակով ներդնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության նոր կամ կատարելագործված համակարգ:

Համակարգը պետք է ներառի առնվազն՝

- անդամակցության գործընթացները,
- որակավորման ծրագրերի կառավարումը,
- ՇՄՁ միջոցառումներ իրականացնող կազմակերպությունների ընտրությունը,
- ՇՄՁ ժամերի ավտոմատ հաշվառումը,
- ներքին հանձնարարականների և որոշումների կատարման վերահսկողությունը:

Իրականացման ժամկետ՝ 2026–2027 թվականներ՝ փուլային իրականացմամբ:

10. CRM կամ այլ ավտոմատացված կառավարման համակարգի ներդրում

Ուսումնասիրել և ներդնել CRM կամ այլ համապատասխան ավտոմատացված համակարգ՝ Պալատի անդամների, որակավորման ծրագրերի մասնակիցների, հնարավոր նոր անդամների, գործընկերների և այլ շահառուների հետ հարաբերությունների արդյունավետ կառավարման նպատակով:

Համակարգը պետք է ապահովի հաղորդակցության համակարգում, տվյալների միասնական կառավարում և գործընթացների ավտոմատացում:

Նախնական լուծման ընտրության ժամկետ՝ մինչև 2026 թվականի սեպտեմբերի 30-ը:

11. Եկամուտների, ծախսերի և բյուջեի կատարողականի վերլուծություն

Սահմանել Պալատի եկամուտների և ծախսերի կառուցվածքի, ծրագրերի ֆինանսական արդյունքների և բյուջեի հոդվածների կատարողականի պարբերական վերլուծության ձևաչափ: Վերլուծության արդյունքները ներկայացնել Պալատի նախագահին և պարբերաբար՝ Խորհրդին:

Առաջին հաշվետվության ներկայացման ժամկետ՝ մինչև 2026 թվականի հուլիսի 31-ը:

Հետագա հաշվետվությունները՝ ամսական, մինչև հաջորդ ամսվա 30-ը:

12. Փաստաթղթաշրջանառության և փաստաթղթավորման ժամանակացույց

Մշակել և հաստատման ներկայացնել Պալատի ներքին փաստաթղթաշրջանառության և հիմնական փաստաթղթերի կազմման, համաձայնեցման, հաստատման ու պահպանման ժամանակացույցը:

Իրականացման ժամկետ՝ մինչև 2026 թվականի հուլիսի 31-ը:

13. Աշխատակազմի գործառույթների հստակեցում

Վերանայել աշխատակազմի գործառույթների և պարտականությունների բաշխումը: Սահմանել կատարողականի հիման վրա պարզևատրման մոտեցում:

Անհրաժեշտության դեպքում կատարել համապատասխան փոփոխություններ աշխատանքային պայմանագրերում, պաշտոնների նկարագրերում և ներքին իրավական ակտերում՝ բացառելով գործառույթների անհստակությունը և անհարկի կրկնությունները:

Իրականացման ժամկետ՝ մինչև 2026 թվականի հուլիսի 31-ը:

14. Գրասենյակի արտաքին և ներքին միջավայրի բարելավում

Իրականացնել Պալատի գրասենյակի արտաքին և ներքին ձևավորման բարելավման միջոցառումներ՝ ապահովելով Պալատի խորհրդանիշերի պատշաճ օգտագործումը, մասնագիտական կառույցին համապատասխան ներկայացուցչական տեսքը և հարմարավետ աշխատանքային ու կրթական միջավայրը:

Իրականացման ժամկետ՝ մինչև 2026 թվականի հուլիսի 31-ը:

15. Միջազգային համագործակցություն և ՀՄԴ անդամակցություն

Ապահովել Պալատի առավել ակտիվ մասնակցությունը միջազգային հանդիպումներին, ֆորումներին, մասնագիտական քննարկումներին և Հաշվապահների համաշխարհային կոնգրեսին:

Շարունակել ՀՄԴ-ի լիիրավ անդամակցության ուղղությամբ աշխատանքները:

Վերլուծել ՀՄԴ անդամակցության պարտավորությունների գործող պահանջները և դրանց փոփոխությունները, գնահատել Պալատի համապատասխանության մակարդակը և ներկայացնել բացերի վերացման գործողությունների ծրագիր:

Վերլուծության ներկայացման ժամկետ՝ մինչև 2026 թվականի հուլիսի 30-ը:

Միջազգային մասնակցության իրականացումը՝ շարունակական:

16. Ուսանողների և բուհերի հետ աշխատանք

Շարունակել և զարգացնել համագործակցությունը ուսանողների, որակավորման ծրագրերի մասնակիցների և մասնագիտական բուհերի հետ:

Կազմակերպել՝

- որակավորման և անդամակցության վկայականների հանձնման հանդիսավոր միջոցառումներ,
- Պալատի ծրագրերի ներկայացումներ բուհերում,
- մասնակցություն շրջանավարտների դիպլոմների հանձնման արարողություններին,
- լավագույն ուսանողների պարգևատրում,
- որակավորման դասընթացներին անվճար կամ արտոնյալ մասնակցության հավաստագրերի տրամադրում:

Իրականացման բնույթը՝ շարունակական:

17. Այլ շահառուների հետ համագործակցություն

Ակտիվացնել համագործակցությունը պետական մարմինների, բիզնես համայնքի, բանկերի, ապահովագրական և ներդրումային կազմակերպությունների, կառուցապատողների և այլ ոլորտային միությունների, խոշոր գործատուների, առևտրի և արդյունաբերության պալատների և այլ շահառուների հետ:

Կազմակերպել համատեղ հանդիպումներ, ոլորտային քննարկումներ և իրազեկման միջոցառումներ:

Իրականացման բնույթը՝ շարունակական:

18. Հանրային տեսանելիություն և հաղորդակցություն

Ընդլայնել Պալատի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստացող անձանց շրջանակը՝ ներառելով ոչ միայն Պալատի անդամներին, այլև որակավորման ծրագրերի մասնակիցներին, ուսանողներին, գործարար համայնքին և այլ շահառուների:

Մշակել հանրային հաղորդակցության պարբերական ծրագիր, որը կներառի՝

- Պալատի գործունեության լուսաբանումը,
- անդամների մասնագիտական ձեռքբերումների ներկայացումը,
- ոլորտի կարևոր փոփոխությունների վերաբերյալ իրազեկումը,
- սոցիալական հարթակներում և այլ տեղեկատվական միջոցներով կանոնավոր հրապարակումները:

Իրականացման բնույթը՝ շարունակական:

19. Օրենսդրական նախաձեռնություններ

Մշակել պետական մարմինների և օրենսդրական նախաձեռնությունների հետ աշխատանքի համակարգված ընթացակարգ:

Հավաքագրել Պալատի անդամների առաջարկությունները, ձևավորել ոլորտի օրենսդրական խնդիրների միասնական ցանկ և, ըստ առաջնահերթության, մշակել ու ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

Իրականացման բնույթը՝ շարունակական:

20. Անդամների բավարարվածության և հետադարձ կապի համակարգ

Մշակել Պալատի անդամների, որակավորման ծրագրերի մասնակիցների և այլ շահառուների բավարարվածության գնահատման համակարգ:

Պարբերաբար իրականացնել հարցումներ և արդյունքների հիման վրա մշակել բարելավման գործողություններ:

Արդյունքները ներկայացնել Պալատի խորհրդին առնվազն տարեկան մեկ անգամ:

Համակարգի մշակման ժամկետ՝ մինչև 2026 թվականի սեպտեմբերի 30-ը:

Հարցումների իրականացումը՝ պարբերական:

21. Պալատի ռեեստրի վարման կատարելագործում

Վերանայել Պալատի ռեեստրի վարման կարգը՝ ներառելով ռեեստրի տվյալների էլեկտրոնային փոխանակման գործընթացի ներդրման, ինչպես նաև ռեեստրի թվայնացման և Պալատի էլեկտրոնային փաստաթղթաշրջառության համակարգի հետ ինտեգրման հնարավորությունները:

Իրականացման ժամկետ՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:

22. Անդամ կազմակերպություններից ստացվող հաշվետվությունների մոնիթորինգի և վերլուծության համակարգի ներդրում

Մշակել անդամ կազմակերպություններից ստացվող հաշվետվությունների ընդունման, մշտադիտարկման էլեկտրոնային համակարգ: Գնահատել հաշվետվությունների առցանց ներկայացման և մշակման համակարգի ներդրման հնարավորությունը:

Համակարգի մշակման ժամկետ՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:

Մշտադիտարկումն ու վերլուծությունը՝ պարբերական:

23. Աուդիտորական ծառայությունների որակի արտաքին գնահատման համակարգի կատարելագործում

Վերանայել աուդիտորական ծառայությունների որակի արտաքին գնահատման ընթացակարգերը, մեթոդաբանությունը և կազմակերպել արտաքին գնահատումներ իրականացնող մասնագետների վերապատրաստում:

Ամփոփել տարվա ընթացքում իրականացված արտաքին գնահատումների արդյունքները, բացահայտել համակարգային թերությունները:

Ընթացակարգերի բարելավման առաջարկությունների ներկայացում՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:

Արդյունքների ամփոփումը՝ տարեկան:

24. Չարգացման պլանավորման և ռազմավարության հաստատման իրավասությունների կանոնադրական հստակեցում

Վերլուծել Պալատի կանոնադրության՝ ռազմավարության և զարգացման պլանավորման վերաբերյալ դրույթները և, անհրաժեշտության դեպքում, մշակել փոփոխությունների նախագիծ, որով հստակ կտարանջատվեն՝

- Պալատի ռազմավարության հաստատումը՝ որպես Ընդհանուր ժողովի իրավասություն,
- ռազմավարության նախագծի և դրանից բխող առաջարկությունների մշակումը,
- Խորհրդի լիազորությունների ժամանակաշրջանի զարգացման հայեցակարգային ուղղությունների և առաջնահերթ գործողությունների ծրագրի հաստատումն ու դրանց կատարման վերահսկումը:

Կանոնադրության փոփոխությունների նախագիծը սահմանված կարգով ներկայացնել Պալատի Խորհրդի, այնուհետև՝ Ընդհանուր ժողովի քննարկմանը:

Անհրաժեշտության դեպքում միաժամանակ ներկայացնել կանոնադրության այլ դրույթների փոփոխության առաջարկություններ:

Իրականացման ժամկետ՝ մինչև Պալատի հերթական ընդհանուր ժողովը:

III. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

1. 2026 թվականի առաջնահերթ գործողությունների ծրագրի իրականացումը ենթակա է պարբերական մշտադիտարկման:

Գործադիր մարմինը պետք է ապահովի՝

- յուրաքանչյուր միջոցառման պատասխանատուի սահմանումը,
- կատարման ժամկետների վերահսկումը,
- կատարված աշխատանքների և արդյունքների փաստաթղթավորումը,
- կատարման ընթացքում առաջացած խնդիրների և շեղումների արձանագրումը,
- անհրաժեշտության դեպքում՝ գործողությունների ծրագրի փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը:

2. 2026 թվականի առաջնահերթ գործողությունների ծրագրի կատարման վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը Պալատի խորհրդին ներկայացվում է եռամսյակային պարբերականությամբ:

3. 2026-2029 թվականների զարգացման հայեցակարգային ուղղությունները և 2026 թվականի առաջնահերթ գործողությունների ծրագիրը կարող է պարբերաբար վերանայվել՝ հաշվի առնելով Ընդհանուր ժողովի որոշումները, ծրագրի իրականացման արդյունքները, օրենսդրական փոփոխությունները, մասնագիտական և միջազգային զարգացումները, ՀՎԽ-ի, Պալատի անդամների և այլ շահառուների առաջարկությունները, ինչպես նաև Պալատի գործունեության ընթացքում ձևավորվող նոր առաջնահերթությունները:

4. Զարգացման հայեցակարգային ուղղություններում և 2026 թվականի առաջնահերթ գործողությունների ծրագրում անհրաժեշտ ճշգրտումներն ու լրացումները կատարվում են Պալատի խորհրդի որոշմամբ՝ Խորհրդի լիազորությունների շրջանակում:

IV. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2026-2029 թվականների զարգացման հայեցակարգային ուղղությունների և 2026 թվականի առաջնահերթ գործողությունների ծրագրի իրականացումը պետք է նպաստի՝

1. Պալատի ինստիտուցիոնալ և կառավարչական կարողությունների ամրապնդմանը,
2. մասնագիտական որակավորման համակարգի մրցունակության բարձրացմանը,
3. անդամների և մասնագիտական համայնքի գիտելիքների շարունակական զարգացմանը,
4. միջազգային մասնագիտական ստանդարտների ժամանակին և որակյալ կիրառմանը,
5. Պալատի գործընթացների թվայնացմանը և արդյունավետության բարձրացմանը,
6. անդամներին տրամադրվող ծառայությունների ընդլայնմանը,
7. երիտասարդ մասնագետների և ուսանողների ներգրավվածության ավելացմանը,
8. գործարար համայնքի և պետական մարմինների հետ համագործակցության խորացմանը,
9. Պալատի միջազգային հեղինակության և ներկայացվածության բարձրացմանը,
10. հաշվապահի և աուդիտորի մասնագիտության հանրային հեղինակության ամրապնդմանը,
11. Պալատի ֆինանսական կայունության և երկարաժամկետ զարգացման ապահովմանը,
12. ռեսուրսի վարման, անդամներից ստացվող հաշվետվությունների մոնիթորինգի ու վերլուծության, և արտաքին գնահատման գործառույթների արդյունավետության բարձրացմանը,
13. Պալատի զարգացման պլանավորման շարունակականության, ինչպես նաև Ընդհանուր ժողովի, Խորհրդի և գործադիր մարմնի իրավասությունների հստակ տարանջատման ապահովմանը:

Սույն զարգացման հայեցակարգային ուղղությունները և գործողությունները ծրագրորդ Պալատի հետագա զարգացման հիմքն են և ենթակա են շարունակական կատարելագործման՝ հաշվի առնելով մասնագիտական միջավայրի փոփոխությունները և Պալատի անդամների ու այլ շահառուների կարիքները: